ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N191-Լ

«26» ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2023Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի ԹԻՎ 72 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշումամբ հաստատված կարգի պահանջները՝

Որոշում եմ՝

1. Հաստատել ՀՀ «Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման» պլանը:
2. ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովի նախագահին.

2.1 Յուրաքանչյուր տարի ճշգրտել ՀՀ Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման պլանը:

2.2 Մշտական հսկողություն իրականացնել մարզում ստեղծված բոլոր տարահանման մարմիններում անհրաժեշտ փաստաթղթերի առկայության և անձնակազմերի համալրվածության ուղղությամբ:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Վայոց ձորի մարզպետի 2013 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 72 որոշմամբ հաստատված ՀՀ «Վայոց ձորի մարզի բնակչության տարահանման» պլանը:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Վայոց ձորի մարզային տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Հարությունյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9/26/2023

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք.Եղեգնաձոր